ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"23" 05 2016 թ. N 02/14.1/1520-16

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
նախագահ Լ.Դոյդոյանին

*Ի պատասխան Ձեր 17.05.2016թ.*
*N 283-ի 5 գրության*

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր հարցմանը հայտնում եմ, որ.

1. քաղաքացիների հարցումները գրանցվում են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում՝ ըստ փաստաթղթի տեսակի, որում առանձնացված է նաև «հարցում» բաժինը:

2. ինչ վերաբերում է տեղեկատվություն ստանալու համար հարցումների գրանցման և դասակարգման, ինչպես նաև դրանց վիճակագրության վարմանը, ապա մենք առաջնորդվում ենք ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշմամբ հաստատված կարգով (հավելված 1), քանի որ հարցումները գրանցվում են նախարարության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության վարման կարգին համապատասխան:

Հարգանքով՝

Մ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՊՈՏԵՄԿԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ է

Կատարող՝ Ս.Հարությունյան
Քարտուղարություն
Հեռախոս՝ 511-378